1859

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԸ

(Վերաբացման առթիւ)։

1913
28
86

1913 թուի սեպտեմբեր ամսից վերաբացուել է Շամախու թեմական Դպրոցը, որ ամբողջ 28 տարի փակ էր։

Շամախու թեմական Դպրոցի հին շրջանը սկիզբ է առնում դեռ 1859 թուից, երբ Շամախին էր նահանգական քաղաք, իսկ Բագուն աննշան աւան էր։ Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի կարգադրութեամբ (կոնդակները պահուում են Շամախու վիճակային կոնսիստորիայում) բացուում է Շամախու թեմի հոգևոր միջնակարգ Դպրոցը, ընտրուում են հոգաբարձական կազմեր, դասարանների թիւը հասնում է մինչև չորրորդ դասարան, ամեն կողմից աշակերտներ են գալիս, որոնցից մի քանիսը յայտնի են դարձել իրենց մանկավարժական-գրական-հասարակական գործունէութեամբ. 36 տարիների ընթացքում այդ Դպրոցը տուել է հարիւրաւոր շրջանաւարտներ. ունեցել է ճոխ մատենադարան (այժմ դրա ողորմելի բեկորներն են պահուում Շամախու ծխական Դպրոցի նկուղներում)։ Բայց 1885—86 թուին, Հայոց միւս ծխական դպրոցների հետ իշխանութեան կարգադրութեամբ փակուում է և այս թեմական դպրանոցը։

36 գ.

Փակումից յետոյ մի քանի փորձեր են լինում Դպրոցը վերաբանալու. այսպէս օրինակ, հանգուցեալ Խորէն եպ. Ստեփանէն ոգևորել էր Բագուեցիներին, որոնք և առատ նուէրներ էին տուել, բայց ինչ-ինչ պատճառներով այն ժամանակ հնար չէ եղել Դպրոցը բանալ։ Անցել են տարիներ, և միայն այժմս, Տ. Անանիա եպիսկոպոսը, թէև տասնամեայ առաջնորդութիւնից յետոյ, Բագուաբնակ մի խումբ շամախեցիների եռանդուն ջանքերով վերաբացում է Դպրոցը։ Շամախու քաղաքային վարչութիւնը քաղաքի հայաբնակ մասում թեմական Դպրոցի համար յատկացրել է

1½ դեսեատին հողաբաժին, Բագուաբնակ պ. Գ. Միրզաբէկեանը նուիրել է շինութեան համար 25 հազար ռուբլի, և խոստացել է մնացեալ ծախսերն ևս հոգալ։

1913-1914 ուսումնական տարում նոր վերաբացուած Շամախու թեմական Դպրոցը տեղաւորուում էր երեք փոքրիկ սենեակների մէջ՝ վիճակային կոնսիստորիայի ներքևի յարկում. դպրոցի համար միանգամայն անյարմար շինութիւն էր. առաջին տարում եղել է երկու դասարան՝ առաջին և երկրորդ, աշակերտների թիւը՝ 40, որից՝ առաջին դասարանում՝ 28, իսկ երկրորդում՝ 12. դասատուների խումբը կազմուած էր չորս հոգուց. տիկ. Մ. Ներսիսեան (Գերմանուհի-գերմաներէն լեզուի 3 դաս.) պ. Սր. Տէր Գրիգորեան – 24 դաս. (աւարտել է Ներսիսեան դպր. 1898 թուին). պ. Գ. Օհանջանեան—24 դաս. (աւարտել է Բագուի առևտր. դպր. 1911 թ.) և պ. Գ. Տէր Ռուբինեան—4 դաս. (աւարտել է Ներսիսեան դպր. 1911 թ. և ուսանող է Պետերբ. Գիւղատնտ. Ճեմարանի)։ Վերաբացման առաջին տարուայ ծախսը հասնում էր 1750 ռուբ. (Գ. Տէր Ռուբինեան ձրիաբար էր դասեր տալիս)։

1914-1915 ուսումն. տարուայ համար Շամախու շրջակայ մեծ գիւղերից շատ աշակերտներ են գալու. մտադրութիւն կայ երրորդ դասարան ևս աւելացնել և ժամանակաւոր յարմար շինութիւն վարձել։

Գ. Տ. Գրիգորեան.

Շամախի, 13 մայիսի 1914.